

11

Տարբարակ

Հ. Յ. ԳԵՂԱԲԵԿՅԱՆԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

ԿԱՆՈՆԵՐ

Հաստատվել Թ-րդ Ըստ. Խոհանքի կողմէց.

30c

3-4

Երևան, տպարտու «ՈՒՐԱՐԴԻԱ»

1919

18x11)

329(47935) 99  
2017

300  
1381-ԿԱ

Հ. Յ. ԳԵՐԵԲԵՂԻՄԻՔԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՅԻՆ

Ա. Խաչիկյան  
1920/8/10

Հայուսութեան մատուցութեան գործիք



Երևան, տպարան «ՈՒՐԱՐԴԻԿ»

1919

## ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

### ԱՆ Դ Ա Մ Ն Ե Բ

1. Հ. Յ. Թաշնակցութեան անդամ կարող է լինել նա, ով ամբողջովին ընդունում է կուսակցութեան ծրագիրն ու գործելակերպը, և թարկում է նրա որոշ շուներին և ամեն ջանք գործ է դնում այդ բոլորն իրականացնելու կիանքի մէջ:

2. Իրաբանչիւր դաշնակցական պարտաւոր է վճարել կուսակցական տուբք՝ շրջանավիճ ժողովի որոշած սակի համաձայն կամ իր եկամտի  $20\%$ :

### ԱՆ Հ Ա Տ Գ Ո Ր Ծ Ի Զ Ն Ե Բ

3. Անհատ գործիչները երկու կարգի են բաժանուում,  
ա. Պրօպագանդիստ (շրջուն գործիչ),  
բ. Լիազօր:

ա Պրօպագագիստ է կոչւում այն գործիչ ընկերը, որը ընտրած է կենտր, կոմիտէի կողմից և կամ վերջնիս համաձայնութեամբ գրադւում է նրա շրջանում պրօպագանդի գործով. Պրօպագանդիստը կարող է զբաղել նաև կազ բակերպական գործերով, եթէ համապատասխան մարտ անհրի կողմից լիազօրւած է այդ բացի համար:



1-2382 Ձ

բ. Եփազօք կոչւում է այն զործիչ ընկերը՝ որը  
ուզարկւում է որիէ մարմնի կողմից որոշ վայր յանա կ  
նպատակով և որոշ ժամանակով՝ որին մասին յիշա  
տակւած ոլոտի լինի լիազօրութեան վկայուկանի մէջ:

## ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԻՆ,

### 1 ՄԱՐՄԻՆՆԻՐ:

4. Դաշնակցութեան կազմակերպութեան մէջ մօնում  
են հետեւալ մարմինները.

- ա. Գիւղական կոմիտէ,
- բ. Թաղային կոմիտէ,
- գ. Գաւառակային կոմիտէ,
- դ. Գաւառական կոմիտէ,
- ե. Քաղաքային կոմիտէ,
- զ. Կենարզական կոմիտէ,
- է. Բիւրո.

### II ԺԱՂԱՎԱՆԻՐ

5. Վերոյիշեալ մարմինների համար պատահան և ու  
ղափները հետեւալներն են.

- ա. Գիւղական ժողով,
- բ. Թաղային ժողով,
- գ. Գաւառակային ժողով,
- դ. Գաւառական ժողով,
- ե. Քաղաքային ժողով,
- զ. Շրջանային ժողով,
- է. Թայտնական ժողով,
- ը. Կոնֆերանս (խորհրդակուն),
- թ. Բնդիսանուր ժողով:

ԳԻՒՂԱԿԱՆ ԵԽ ԹԱՂԱՅԻՆ ԿԱՄՄԻՑԻՆԵՐ.

6. Դաշնակցական անդամները կազմում են մարմին-  
ներ՝ զիւղերում թւով մէկից ոչ աւելի, աւաններում՝  
երեքց ոչ աւելի և քաղաքաներում՝ թաղերի քանակով:

Ժամանակութիւն: Թաղային և զիւղական կոմիտէները պէտք է  
ունենան աւանաղն 15 անդամ, նրանք կարող են ունենալ հետեւալ  
սոսրաբաժնները՝ մարտական, արհեստակցական, քանուորական,  
զիւղացիական, ուսանողական, աշակերտական, կարմիր խաչի և  
այլն: Խըրացանչիւր սասրաբաժնի համար մշակուում է ներքին  
յատուկ կանոնադրութիւն:

7. Նոր անդամներ ընդունուում են կոմիտէի անդամ-  
ների մեծամասնութեան հաւանութեամբ և առնեազն  
երկու անդամի հրաշխաւրութեամբ:

8. Գիւղական և թաղային ժողովները ունենում են  
զիւղական և թաղային կոմիտէներ, որոնք ընտրում  
են գաղտնի քէարկութեամբ և ձայների պարզ մեծա-  
մասնութեամբ:

9. Դաշնակցական բոլոր անդամները վճարում են  
կուսակցական տուրք իրենց եկամտի 20% կամ շրջա-  
ռային ժողովի որոշած սակի համաձայն և ստանում են  
համապատասխան ընկալագիր:

10. Գիւղական և թաղային կոմիտէները իրենց  
տմբուջ եկամուտը մացնում են գաւառակային կոմի-  
տէի դրամարկղը՝ առնելով նրանից համապատասխան  
ընկալագիր:

ԳՐԱԾԱԿԱՅԻՆ ԵԽ ԹԱՂԱՅԱՅԻՆ ԿԱՄՄԻՑԻՆԵՐ.

11. Խըրօքանչիւր զաւոսոկ և քաղաք կարող է  
ունենալ իր զաւառութային և քաղաքային կոմիտէն,  
ևթէ ունի առնեաղն 5 թաղային կոմիտէ 5 զիւղական  
կոմիտէներ:

12. Գաւառակային և քաղաքային կոմիտէները բաղկանում են երեք հոգուց և ընտրուում են թաղային ու գլւղական կոմիտէների ներկայացուցիչների կողմից՝ ձայների պարզ մեծամասնութեամբ:

Ժանօթութիւն.—Գաւառակային և քաղաքային կոմիտէները ընտրուում են տարին մի անգամ:

13. Գաւառակային և քաղաքային կոմիտէները վարում են իրենց գաւառակի կամ քաղաքի գիւղական և թաղային կոմիտէների ընդհանուր գործերը և հանդիսանում են միջնորդ գիւղական ու թաղային կոմիտէների և աւելի բարձր մարդիների միջև:

14. Գաւառակային և քաղաքային կոմիտէները հսկում են, որ համաձայն շրջանային ժողովի որոշած սահի կամ եկամտի  $20\%$ -ի զանձեն կուսակցական տուրքերը զաշնակ, ական անդամներից, գիւղական և թաղային կոմիտէների միջոցով:

15. Գաւառակային և քաղաքային կոմիտէները պահում են ել և մտից մատեան, գանձում առուրքերու եկամուտները և ամբողջապէս փոխանցում գաւառական կոմիտէնուն:

Ժանօթութիւն.—Պաւառակային և քաղաքային կոմիտէները իրենց ծախքերի համար ստանում են պաւառ կոմիտէներից դրամ, որն աւելի չպէտք է մնի, քան երեց՝ (որի  $10\%$ ):

### Գ Ա Խ Ա Ռ Ա Կ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Է.

16. Իւրաքանչիւր գաւառ յարող է ունենալ սիայն մէկ կոմիտէ՝ առնւազն երեք գաւառակային և քաղաքային կոմիտէներով:

Ժանօթութիւն. Այն գաւառը, որտեղ ծից աւելի թաղային կոմիտէ ունեցող քաղաք կայ, կարող է ունենալ երկու կոմիտէ՝ քաղաքի և գաւառի համար:

17. Գաւառական կոմիտէն ընտրուում է գաւառական

ժողովից, որ կազմւում է գաւառակային և թաղային կոմիտէների առնւազն երկու երրորդի ներկայացուցիչներից: Իւրաքանչիւր գաւառակի կամ թաղի կոմիտէ գաւառական ժողովին ուղարկում է 2—3 ներկայացուցիչ:

18. Գաւառական կոմիտէն կազմւում է առնւազն 5 անգամից, որոնք ընտլւում են զարտնի քէտարկութեամբ և ձայների պարզ մեծամասնութեամբ:

19. Գաւառական կոմիտէն իր տեղական գործերում ինքնալուր է և վարում է իր գաւառի կամ քաղաքի կազմակերպական ու պրօպականդի գործերը:

20. Գաւառական կոմիտէն հսկում է որ գաւառակային կոմիտէները շրջանային ժողովի որոշած սակի կամ եկամուտի  $20\%$  ի համաձայն զանձեն կուսակցական տուրքերը:

21. Գաւառական կոմիտէն քննում է գիւղական, թաղային, գաւառակային և քաղաքային կոմիտէների հաշիւները, նրանց ամբողջ եկամուտը մտցնում իւր զանձարանը՝ տալով նրանց համապատասխան ընկալագիր:

22. Գաւառական կոմիտէն իւր ամբողջ եկամուտի  $20\%$  գաւառական ժողովի ցուցմունքների համաձայն ծախսում է իւր շրջանի կարիքների վրա, իսկ  $70\%$  փոխազրում կենար. կոմիտէն՝ առնելով նրանից համապատասխան ստացական:

### Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Է

23. Կենտրոնական կոմիտէն պէտք է ունենայ առնւազն երեք գաւառական կոմիտէ:

24. Կենտրոնական կոմիտէն ընտրուում է իւրաքան-

չիւր տարի իւր շրջանին Շրջանային ժողովի կողմից, դադար կազմութեամբ և ձայների<sup>2</sup> մէ մեծամասնութեամբ:

25. Կենտրոնական կոմիտէն կազմուում է առնւապն 5 անդամից:

26. Կենտրոնական կոմիտէն խրաֆանչիւր 6 ամիսը մի անգամ հասցնուում է բիւրօնին մանրամասն հաշիւտութիւն իւր գործունէութեան մասին-այլ և մարմինների ցուցակը:

27. Կենտրոնական կոմիտէն ունի իւր կնիքը «Հ. Յ. Դաշնակցութեան Ն... կհնու. կոմիտէ» մտկադրա-թեամբ:

28. Կենտրոնական կոմիտէն վարուում է իւր շրջանի բոլոր գործերը և հսկում է իրեն ենթակայ կոմիտէների գործունէութեանը:

29. Արտաքին բոլոր յարաբերութիւնները կատարուում են կենտրոնական կոմիտէի միջոցով և կամ նրա պիտութեամբ ու հրահանգով:

30. Կենտրոնական կոմիտէն իւր բոլոր թղթերը, փաստաթղթերը, յեղափոխական-պատմական նշանակութիւն ունեցող գոյքերն ու նամակագրութիւնները Շրջանային ժողովից յիշույ հասցնուում է բիւրօնի ի պահ:

31. Կենտրոնական կոմիտէն հսկում է, որ զաւական կոմիտէները կուսակցական տուրքը զանձնին Շրջ. ժողովի որոշման համաձայն, և քննուում է զաւական կոմիտէների թէ զինական, թէ գոյքի և թէ դրամական հաշիւները:

32. Կենտրոնական կոմիտէն բացի կոմիտէն տուրքերից կարող է սահեծել եկամտի և այլ աղբիւրներ (հանդանակութիւն, ձեռնարկներ և այլն) Շրջանային ժողովի որոշման համաձայն:

33. Կենտրոնական կոմիտէն, Դաւառական կոմիտէներից ստանուում է ամբողջ եկամուտի 75%՝ տալով համապատասխան ընկալազիբ:

34. Կենտրոնական կոմիտէն իւր ամբողջ եկամտի 25%՝ տալիս է բիւրօնի, իսկ մնացածը յատկացնուում է Շրջանային ժողովի կողմից որոշած ձեռնարկներին ու պէտքերին՝ համուձայն նախահաշչի:

Ժամանութիւն, Յանուեկ եկամուտները զարծակը են այն նպատակների համար, որոնց համար ստացւած են:

35. Կենտրոնական կոմիտէն տարին երկու անգամ ներկայացնուում է բիւրօնի իւր շրջանի հաշիւները, սովորական ձևով և կամ Շրջանային ժողովի կողմից հաստատած հաշիւտախտակով: Հաշիւները պէտք է վատերացւած լինին կենուր: կոմիտէի կնիքով և առնւապն երեք անդամի ստորագրութեամբ:

36. Այն կենտրոնական կոմիտէն, որ տարին մի անգամ հաշիւ չի ներկայացնուում, հոմարւում է լուծւուծ:

### Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԻՒՐՕ

37. Կուսակցութեան կենտրոնական զարծակիր մտքինն է Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրօն:

38. Բիւրօն ընտրուում է Ընդհանուր ժողովի կողմից զաղտնի քւէարկութեամբ և ձայների երկու երրորդի մեծամասնութեամբ և բաղկանուում է 7 անդամից և 3 փախանդամից:

Մասնաթիւթիւն, Բիւրօի անդամը չի կարող միաժամանակ լինել և կառավարութեան անդամ:

39. Բիւրօի կենուրն է Հայաստանի մոյրաքառ

40. Բիւրօի ժողովներին գնաուկան ձայնի իրաւունքը մասնակցուում են միայն Բիւրօի անդամները:

41. Բիւրօն հետեւում է, որ կանոնաւոր կերպով

գործադրւեն ընդհանուր, ուայօնական և շրջանային ժողովների ու կոնֆերանսների ուրոշումները, ինչպէս նաև կաղմակերպական կանոնները։ Հսկում է, որ կոնֆերանսը, ուայօնական ու շրջոնային ժողովները չհակասին ընդհ. ժողովի որոշումներին։

42. Բիւրօն տեղեկացնում է կենտրոնական կօմիտէներին կուսակցական գործերի ընթացքի մասին և հազորդ ևմ է նրանց իր գործունէութեան մասին վեց ամիսը մթ անդամ։

43. Բիւրօն կենտրոնական կօմիտէների պահանջմամբ և անհրաժեշտ համ բատծ գէպքերում ուղարկում է ընկերութեան կոմիտէների կազմը ուժիկ շնկում՝ ձայնի իր ւունքով։

44. Բիւրօն բաշխում է եկամուտները համաձայն ընդհ. ժողովի մշակած նախահաջութիւն։

45. Մարմինների համար կնիքները պատրիելու և տալու իրաւունքը վերապահուած է միայն բիւրօնուն

Ծանօթութիւն. ա. Կոնֆեների վրա կուսակցական գինանշանը գործածել կարող են միայն բիւրօն, զատական մարմինը և կենտրոնական, քաղաքային ու գտառական կօմիտէները։

բ. Արհեստակցական միութիւնների կուսակցական հատուածներին կոնֆեները։

գ. Այդ կնիքների ձեր պէտք է տարբերի կուսակցական կնիքների ընդհանուր ձեցը։

46. Բիւրօն պալտաւոր է տարին մի տնկամ իր անդամներից մէկին ուղարկել կենտր. կօմիտէների և միւս մարմինների գործալարութիւնը ըննելու։

47. Բոլոր զրամական մշջոցները կենտրոնանում են բիւրօն ժօն, որը իր հերթին հատկում է զրամական կանոնաւոր գննաման և ծախսման։

48. Բիւրօն տարւայ վեցին քննում է իրեն ենթակայ բոլոր մարմինների հաշիւնները և արդիւնքը հազոր գում է կենտր. նախական կօմիտէներին։

49. Բիւրօն պահում է իւր որոշումների կանոնաւոր արձանագրութիւն։

50. Ծանրակշիռ խնդիրների լուծման համար բիւրօն հրաւիրում է արտակարգ ուայօնական ժողով կամ կօնֆերանս։

51. Բիւրօն վարում է կուսակցութեան գործերը, ղեկավարւելով ընդհ. ժողովների որոշումներով։

52. Հրաւարակում է պաշտօնական օրգաններ՝ ղեկավարւելով ընդհ. ժողովի կողմից տրւած հրահանգներով։ Անում է նախական և ուրիշ հրաւարակութիւններ հայերէն և օտար լեզուներով։

53. Բիւրօն հետևում է, որ կուսակցական մնացած օրգանները չհակասին ընդհանուր, ուայօնական և շրջանային ժողովների ու կօնֆերանսի գծած ուղղութեանը։

### ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ՖՐԱԿցիաների թեկնածուների

54. Պարլամենտական ֆրակցիաների թեկնածուների ցանկը կազմում է բիւրօն նախօրօք ստանալով Շրջանային ժողովների թեկնածուների ցուցակը, ապա առջարկում է Ուայօնական ժողովին ի քննութիւն և ի հաստատութիւն։

55. Պարլամենտական ֆրակցիաները ինքնուրոյն կերպով վարում են պարլամենտական ամբողջ օրէնսդրական աշխատանքը՝ ղեկավարւելով ընդհ. ժողովի, կօնֆերանսի և համապատասխան ուայօնական ժողովների որոշումներով։

56. Բիւրօն հսկում է, որ ֆրակցիաները չշեղին ընդհ. ժողովի, կօնֆերանսի և համապատասխան

և այօնական ժողովի որոշումներից:

57. Ընդէ. ժողովի, կօնֆերանսի և համապատասխան սայօնական ժողովի կողմից չնոխահուած հարցերում պարլամենտական ֆրակցիաները դեկավարուում են բիւրօի հրանափներով:

58. Բիւրօի և ֆրակցիաների մեջն ծագած անհամաձայնութեան դէպքում, խնդիրը լուծուում է համապատասխան սայօնական ժողովի կողմից, իսկ մինչն սայօնական ժողովի գումարումը պարտապիր է բիւրօի ահանդիւթեաւ:

59. Սին բոլոր ժամանակաշրջանում, երբ խորհրդանը այս կամ այն պատճառով չի զումարուում, խորհրդագրանի ֆրակցիայի բոլոր կուսակցական իրաւունքները անցնուում են բիւրօն:

### Կ. Ա. Բ. Ա. Ա. Բ. Ռ Ո Ւ Թ Ի Խ Ե

60. Ֆրակցիան ընտրում է նախարարակետին՝ նախակետանութեանը բիւրօրի համաձայնութիւնը:

61. Նախարարակետը կազմում է կանագարութիւն և պարլամենտին ներկայացնելուց առաջ սուսանում է ֆրակցիայի հաւանաւթիւնը:

62. Նախարարական թեկնածուների վերաբերմանը ֆրակցիան ունի մերժումի իրաւունք:

63. Նախարարների մասնակի փոփոխման դէպքում նորիւոր է ֆրակցիայի վճիռը, իսկ ամբողջական ձևադամբ պարագային անհրաժեշտէ բիւրօի համաձայնութիւնը:

64 Երբ խորհրդարանը օրէնսդրական կարգով կամ չնախատեսւած արտակարգ պատճառով դադարի գոյ-

ութիւն ունենալուց կառավարութեան դաշնակցական անդամները՝ զարծուութեան համախորհութ:

65. Կառավարութիւն դաշնակցական անդամները մրուամատակ կուսակցական որին մարմին անդամները կուրոց լինել:

### Ի Վ Ե Ա Վ Ա Ր Ա Կ Թ Ի Խ Ե Ն Ե

66. Գումանական կոմիտէն կացուում է դաշնական զէմանուի, քաղաքի կոմիտէն՝ քաղաքին ինքնալիւրթիւն համար և անուն անունների ցանկը՝ և կհօտ, և կոմիտէն համար թիւնը սուսանուց յիսուց ուսուց բկում է դաշնական կոմիտէն քաղաքային ժողովին ի հասանուութիւն:

67. Նահ այսական զեմանութեան թեկնածունեւ ի ցանկը կազմուում է կենարանական կոմիտէն կոմիտէն՝ որը խորհրդակցելով բիւրօրի հնաւառաջարկ ու եւ շքման այլին ժողովին ի հասանուութիւն:

68. Զերաւույականն ի քաղաքային ինքնալիւրթիւննեւ ի քրտակցիոնները՝ ինքնալիւրթ կերպով վարուում են իրենց յործերը՝ կերպարաւուելով վեցն, տաղմաների, կոնֆերանսի, սայհական և Հօջուց ժողովի որոշումներով:

69. Կենարանական զաւառական և քաղաքային կոմիտէնները հնաւառաջարկ ու համապատասխան ֆրակցիաները չեղեն բայց ժողովի, կոնֆերանսի, սայհական և շքման ժողովների ուսուցումներից:

70. Ընդէ. ժողովի կոմիտէրանակ, այօնական և շքման ժողովին ժողովների կողմից չնախատեսւած նորիւոր դէպուայական և քաղաքային ինքնալիւրթութիւնների ֆրակցիաները զեկուալիս կոմիտէն համաձայնութիւնուում են կենարանական կոմիտէն համաձայնութիւնուուի:

71. Կինտ. կոմիտէի և Փրակցիաների միջև ծագած անհամաձայնութեան դէպքում, վէճը լուծումէ շրջանային ժողովի կողմից և մինչև շրջանային ժողովի դումարումը պարտադիր է բիւրօյի տեսակէտը:

72. Խնքնավարութեանց վարչութիւնների դաշնակցական անդամները ենթարկուում են համապատասխան ինքնավարութիւնների գաշնակցական Փրակցիաներին:

## ԺՈՂՈՎՆԵՐ

### ԳԻՒՂԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱՅԻՆ ԺՈՂՈՎՆԵՐ

73. Գիւղական և թաղային ժողովներին մասնակցում են գաշնակցական բոլոր կազմակերպութ անդամները:

74. Գիւղական և թաղային կոմիտէներն ընտրուում են գիւղական և թաղային ժողովներում անդամների  $\frac{2}{3}$ -ի ներկայութեամբ և ձայնների պարզ սհծամանութեամբ:

75. Գիւղական և թաղային ժողովները հանդիսանում են գիւղի կամ թաղի բոլոր կուսակցական գործերի և գիւղական ու թաղային կոմիտէների վերահսկիչը:

### ԳԱՀԱՄԱԿԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԺՈՂՈՎՆԵՐ

76. Գաւառակային կամ քաղաքային ժողովներին մասնակցում են գիւղական և թաղային կոմիտէների կողմից մէկական, իսկ գիւղական և թաղաքային ժողովներից

ըի կողմից իրենց թիփ համեմատ ներկայացուցիչներ Ամենափոքր մարմինը պէս է մասնաւցէ առնւտղն Յ հոգով:

77. Ներկայացուցիչների առնւազն  $\frac{2}{3}$ -ի ներկայութեամբ ընտրուում է գաւառակային կամ քաղաքային կոմիտէ կազմութ առնւազն երեք հոգուց:

78. Գաւառակային և քաղաքային ժողովները ներկայանում են իրենց գաւառակի և քաղաքի բոլոր կուսակցական գործերի և գաւառակային ու քաղաքային կոմիտէների վերահսկիչը և ուղղութիւն տողը:

79. Գաւառակային և քաղաքային ժողովները ըննում են քաղաքային և գաւառակային կոմիտէների հաշիւները:

### ԳԱՀԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

80. Գաւառական ժողովին մասնակցում են կենտր. կոմիտէից, գաւառակուին և քաղաքային կոմիտէներից և գաւառական կոմիտէից մէկական և գաւառակային, քաղաքային ժողովներից մէկից երկու ներկայացուցիչներ:

81. Գաւառական կոմիտէն ընտրուում է ներկայացուցիչների առնւազն  $\frac{2}{3}$ -ի մասնակցութեամբ և ձայնների պարզ մեծամասնութեամբ:

82. Գաւառական ժողովները հանդիսանում են իրենց շրջանի կուսակցական գործերի և գաւառական կոմիտէի վերահսկիչն և ուղղութիւն տողը:

83. Գաւառական ժողովները ըննում են գաւառական կոմիտէի հաշիւների ու գործակորութիւնը:

ՇՐՋԱՆԱՑԻՆ ԺՈՂՈՎ

84. Շրջանային ժողովին մասնակցում են գտառուական կոմիտէների, կենտրոնական կոմիտէի և ըիւրօի կողմից մէկական և գալառական ժողովների երկուական ներկայացուցիչները:

85. Շրջանային ժողովները հանդիսանում են իրենց վրձնի կուսակցական գործերի և կենտր. կոմիտէի վերահսկիչն ու ուղղութիւն տեսզը:

86. Շրջանային ժողովը ընտրում է կենտր. կոմիտէ գաղափար քէտարկութեամբ և ձայների <sup>2/3-ի</sup> միջամանութեամբ:

87. Շրջանային ժողովը կազմում է կենտր. կոմիտէի ընտրում, քննում և հաստատում է նրա հաշիւ ները, մշտկում է առաջիկայ գործունեութեան ծրագիրը, կուսակցական ծրագրի, ընդհ. ժողովի, կոմիտէ բանախների և ույցնական ժողովների ընդդամ սահմանաբռում: Քննում ու ընտրում է շրջանի մարմինների միջն ժապած անհամաձայնութիւններն ու ընդհարումները:

88. Շրջանային ժողովները հրամանում են ըստ կարիքի, բայց անուազն տարեկան մի անգամ:

ՌԱՅՈՒԱԿԱՆ ԺՈՂՈՎ

89. Ռայուական պետութեան սահմաններում գտնող բարը կենտր. կոմիտէների և շրջանային ժողովների ներկայացուցիչների ընդհանուր ժողովը հոչում է ույցնական ժողով:

90. Ռայուական ժողովներ հրաւիրում է թիւրօն ըստ կարիքի, բայց առ նևազն տարին մէկ անգամ:

91. Ռայուական ժողովը կազմուում է թիւրօի կենտր. կոմիտէների մէկական, շրջանային ժողովների երկուական, պարլամէնտական ֆրակցիայի, ուսանողական և աշակերտական միութեանց մէկական ներկայացուցիչներից:

Մանօթութիւն. Ժողովը օրինական է համարւում երբ ներկայ է վերայիշեալ մարմինների ներկայացուցիչներից <sup>2/3-ը</sup>:

92. Ռայուական ժողովը մշտկում է իր ուսյօնի գործունէութեան համար միատեսակ գործելակերպ, դուրս չգալով ծրագրի և ընդհ. ժողովի որոշումների սահմաններից:

93. Ռայուական ժողովը նսում և վաւերացնում է թիւրօի ներկայացուցիչների ընտրելիների ընդունուակը:



94. Հ. Յ. Դաշնակցութեան խորհրդաժողովին մասնակցում են՝ թիւրօն իծր ամբողջ կազմով, ըստոր կենտր. կոմիտէները և Հայաստանի խորհրդարանական խմբակցութիւնը (ֆրակցիա) մէկական ներկայացուցիչներով:

95. Խորհրդաժողովը օրինական կը համարւի երբ ներկայ է կենտր. կոմիտէների ներկայացուցիչների կէսից աւելին:

96. Խորհրդաժողով կը հրաւիրւի թիւրօի անդամների <sup>2/3-ի</sup> կամ առնւազն երեք կենտր. կոմիտէների պահանջով:

97. Խորհրդաժողովը հրաւիրում է ընդհանուր ժողովի կողմից նախատեսած հարցերի համար և

նրա որոշումները պարտադիր են բիւրօի և բոլոր  
մարմինների համար:

Մանօթութիւն. Առիրդագողովք փոփոխութեան չի կարող  
ենթարկել Մրադիրը, կանոնադիրը և ընդէ. ժողովի որոշումները:

### ԸՆԴՀԱՆՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎ

98. Հերթական ընդհ. ժողով հրաւիրելու ժամանակը  
որոշում է նախորդ ընդհ. ժողովը, իսկ արտակարգ  
դժուգերում հրաւիրում է բիւրօն:

99. Ընդհ. ժողովին մասնակցում են՝ բիւրօից, ըսր-  
ջան ոյին ժողովներից, կենտր. կոմիտէններից, Հայա-  
տանի պարլամենտական ֆրակցիայից և ընդհանուր  
ուս մնողական և աշակերտական միութիւններից մէկ-  
ական ներկայացուցիչներ:

Մանօթութիւն. Երջանային ժողովները իրաւունք ունեն ուղարկե-  
լու մէկից աւելի ներկայացուցիչներ, եթէ նրանք համապատաս-  
խուում են մէկից աւելի կենտր. կոմիտէութիւնների ցէնդին,  
կողմանկերպւած անդամների թւով:

100. Բիւրօն կորող է ընդհանուր ժողովի հրաւիրել  
կենտր. կոմիտէնների շրջ աններից զուրս գտնւած այն  
կոմիտէններին, որոնք առանձնապէս աչքի են ընկնում  
իրենց գործունէութեամբ:

101. Ընդհ. ժողովը կարող է իր անդամների  $\frac{1}{3}$  սահ-  
մաններում հրաւիրել ձայնի իրաւունքով գործիչ ըն-  
կերների:

102. Բոլոր մարմինները պարտաւոր են վեց ամիս  
առաջ ուղարկել բիւրօնին այն հարցերի ցուցուկը, ո-  
րոնց համար պահանջում է ընդհ. ժողովի որոշում:  
Օգտւելով այդ ցուցակներից՝ բիւրօն կազմում է օրա-  
կարգը, որն և ուղարկում է մարմիններին, ժողովից

առնւազն երեք (3) ամիս առաջ, որպէսզի պատգամ ա-  
ւորները բերեն իրենց մարմինների կարծիքները:

103. Պատգամաւորները իրաւունք ունեն առաջար-  
կելու ժողովին, մտցնել օրակարգի մէջ նոր տարրեր,  
որոնք քննւում են պաշտօնական հարցերը քննելուց  
յիսոյ:

104. Պատգամաւորները ձայն են տալիս իրենց հա-  
յեցողութեամբ:

105. Բիւրօնի և կենտր. կոմիտէնների պատգամաւորը-  
ները պարտաւոր են ներկայացնել ընդհ. ժողովին գլ-  
րաւոր զեկուցում ու զրաւոր հաշւէտութիւնն. հաստ-  
ատւած իրենց մարմինների կնիքով ու ստորագրու-  
թեամբ: Այդ պահանջին բաւարարութիւն չտառդ պատ-  
գամ աւորները զրկւում, են ձայնի իրաւունքից և մաս-  
նակցում են ժողովին իորհրդակցական ձայնով:

106. Իւրաքանչիւր պատգամաւոր պարտաւոր է իւր  
էատ բերել զինքն ուղարկող մարմինի մէծ ամասնու-  
թեան և փոքրամասնութեան կարծիքները:

107. Ընդհ. ժողովը համարում է օրինաւոր երբ ներ-  
կայ է պատգամաւորների  $\frac{2}{3}$ -ը:

108. Ընդհ. ժողովը ծրագրային, կանոնադրական և  
սկզբունքային հարցերը որոշում է ներկայ եղողների  
 $\frac{2}{3}$ -ի մէծամասնութեամբ:

109. Իւրաքանչիւր պատգամաւոր ունի միայն մէկ  
ձայն:

110. Պատգամաւորը չի կարող իր ձայնը տալ ուրի  
շին, առանց իր մարմինի համաձայնութեան:

111. Ընդհ. ժողովի որոշումները կհամարւին վերջ-  
նական, երբ բոլոր արձանադրութիւնները ստորագրու-  
թեած կլինեն և ժողովը կհամարւի փակւած:

112. Ընդհ. ժողովը չի կարող հիմնական փոփոխու-  
թիւն մտցնել գահնայտութեան սպատակների և կադ-

մակերպութեան սիստէմի մէջ, եթէ այդ հորցերը նախօրք չեն ներկայացւած կենտր. կոմիտ. ներին՝ ի քըն-նութիւն:

---

### ՆԻԱԶԱԴՈՅՑՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

113. Խրաբրանչիւր կենտր. կոմիտէ պարտաւոր է ուսնենալ՝ ա. երեք գաւառա ին կոմիտէութիւն համապատասխան ցէնզով: բ) Ընդհ. ժողովի որոշած նախահաշւով կամ առնւադն 20,000 ֆրանկ տարեկան հասոյթ:

114. Ռւսանողական և աշակերտական միութիւն ներն իրաւունք կունենան մասնակցելու ընդհ. ժողովին այն դէպքում՝ եթէ կազմակերպւած ռւսանողների թիւը հասնում է 200-ի իսկ աշակերտութեանը՝ 300-ի:

115. Վերոյիշեալ պահանջներին բաւարարութիւն չաւողները զրկւում են ընդհանուր ժողովում ձայնի իրաւունքից:

---

### ՖՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

116. Կաղմակերպութեան դրախական միջոցները կազմում են ա) Անդամակմաքարեներ՝ 2—10% կամ համաձայն շրջ. ժողովի որոշման: բ) Նևերներ: գ) Հանգանակութիւն: դ) Զանազան ձեռնարկներից գոյացած գումարներ: ե) Պատահական հկամուտներ:

Ժանօթութիւն. Քաջնակցական խրաբանչիւր անդամ պարտաւոր է ունենալ անդամակմաքարեների փոխարէն

պէտք է ստանայ գրամանիշներ, որոնք փակցէնու ևն անդամատերների համապատասխան տեղում:

117. Իւրաքանչիւր դաշնակցական պարտաւոր է մտցնել ամէն ամէն տեղական դաշնակցական մարմի գրամարէկը իր ամսական հկամուտի առնւակն չ/ո

Ծանօթութիւն. Այն դաշնակցական անհատը որ 3 (երեք) ամլ և շրունակ չի վճարում անդամագնար, զրկւում է ձայնի և ընտրւելու իրաւունքից:

118. Դրամի հանգանակութեան իրաւունքը վերապահւում է միայն Բէլըօին և կենտր. կոմիտէներին:

---

### ՀԱՇԻԱՇՈՒԹԻԹԻԿ

119. Խրաբրանչիւր դաշնակցական մարմին պարտաւոր է իր սուպած զումարի համար տալ կնքած ընկալակիր գանձապահի ստորագրութեամբ:

120. Բոլոր մարմինները պարտաւոր են իրենց հաշիւները պահել կանոնաւոր հաշւապահական ձևով:

121. Խրաբրանչիւր մարմին պարտաւոր է երեք ամիս մի անգամ հաշւապահական ձևով ներկայացնել իր հաշիւները իրենից բարձր մարմին:

Ժանօթութիւն. Կենտր. կոմիտէները իրենց հաշիւները ուղարկում են Բէլըօին վեց ամիս մի անգամ:

122. Բոլոր մարմինները պարտաւոր են իրենց տարեկան հաշիւները փակել գեկտ. 31 ին և տարի կան հաշւենութիւնը ներկայացնել իրենցից բարձր մարմին—ա) հաշւեկշիռ, բ) մուտքի և ելքի օրագիր (գրամարէկի հաշւեմտական), 2) կահ օցուցակ (ինւենտարի), ուր պէտք է մանրահնան յիշառակել ունեցած գոյքի կնման իսկական և օրւան մօտաւոր արժէքը:

Ժանօթութիւն. Հաշիւները ներկայացնելիս գանձապահները

կարտաւոր են կցել փաստաթղթերը:

123. Բիւրօն պարտաւոր է իւր ծախսերը կատարել ընդհ. ժողովի նախագծած նախահաշւի սահմանների մէջ:

124. Բիւրօն պարտաւոր է պահել մի զլխաւոր հաշւեմատեան, ուր պիտի մուծեի կենտր. կոմիտեների մուտքն ու ելքը՝ համաձայն մարմիններից պարբերաբ ստացւած հաշիւների:

125. Բիւրօն պէտք է ունենալ մարմինների ելմտից արձանազրութեան զիրք, որի հումածայն գումարները պէտք է բաժանւեն ըստ նախահաշւի:

126. Այն մարմինները որոնք քաղաքական պատճառներով հաշւետոմարներ չեն կարող պահել իրենց մօտ երկար ժամանակ, առանց սպասելու հումածայ կամ վեցամսեայ հաշւետութեան, պէտք է հաշիւնները ուղարկեն բիւրօին:

127. Բիւրօն պարտաւոր է ունենալ իւր հաշւապահն ու հաշւերննիչը, որի միջոցով վարում է մարմինների հաշիւնների կանոնաւորութիւնն ու հաշւետութիւնը:

128. Արգելուվ է կռւսակցական սիջոցներից ու մէկին գրամ տալ փրխարինաբար կամ որևէ շահադիտական նպստակներով:

129. Բիւրօն մշակում է աշւապահական ընդհանուր ձեի համար հրահանգներ պարտաւորեցուցիչ կենար, կոմիտէնների համար, համաձայն ընդհ. ժողովի որոշումների:

130. Փոխառութիւն անելու իրաւունքը վերապահում է միմիայն բիւրօին և կենտր. կոմիտէին:

131. Կոմիտէններն իրաւունք չունին փոխառութիւն անելու առանց կենտր. կոմիտէի թոյլաւութեան:

132. Փոխառութիւնը կատարում է մարմնի ան-

դամների անձնական պատասխանաւութեամբ, բայց ոչ կազմակերպութեան անունից:

133. Բիւրօի ընդհանուր եկամուտի 5% մուլտ է նրա գրամարկում յեղափոխական ֆօնդ կազմելու նպատակով. այդ գումարի գործադրութիւնը վերապահու ծ է ընդհ. ժողովին:

### Օ Գ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

134. Խրաբանչիւր դաշնակցական գործիչ պարտաւոր է ապրել իր սեփական միջոցներով. ա) Երբ մտանաւոր զբաղմունքը չի խանգարում նրան յանձնուած կուսակցական գործը յաջողութեամբ վարելու կամ բ) Երբ շըջանից բացակայելուց յետոյ նա չի զրկում իր նախկին պաշտանից:

135. Երբ դաշնու կցական գործը չը կուսակցական յանձնարարութիւն կատարելիս զիկում է իր պաշտօնից. դաշնակցական մարմինը կամ ընկերները պէտք է նրա ամար գործ գտնեն, իսկ մինչեւ այդ՝ պահեն նրան կազմակերպութեան միջոցներով ոչ ա ելի քան երկու ամիս:

136. Գործի մէջ գտնուած ընկերների ընտանիքները կազմակերպական միջոցներից չեն օգտաւում: Ժամանակակիցն այլքում այլպիսի ընտանիքներին կարելի է նպաստ տալ կարմիր նաշի միջոցներից (բ) Կարմիր նաշի ներքին կանոնագրութիւնը մշակում է Երջանային ժողովը:

137. Կենտրօնական կոմիտէնները իրաւունք ունեն, անհրաժեշտ համարւած դէպօւում, մինչև երկու պատ անդամ պահել կուսակցութեան սիջոցներով:

ՄԱՐՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ

138. Յեղափոխական շրջաններում իր ձեռնարկանքի յաջող իրավործման նպատակով, կուսակցութիւնը կազմակերպում է մարտական խմբեր դաշնակցական ընկերներից:

139. Մարտական խմբերն ենթարկում են և եղական մարմինների և բիւրօի տւած հրահանգներին:

140. Մարտական խմբի իրաքանչիւր անդամ պարտաւոր է ապրիլ սեփական միջոցներով, ունենալով սեփական զէնք և միշտ պատրաստ լինել յեղափոխական ձեռնարկների համար:

141. Մարտական խմբի անդամներն իրենց յանձնւած գործն իրավործելիս ապրուստի միջոց ստանում են կուսակցութիւնից:

ՄԻԱԿԹԻՒՆԵՐ

142. Միութիւնները լինում են գիւղացիութեան արհեստակցական, կահանց, կարմիր խաչի, ուսանողական, աշակերտական և այլն:

143. Արհեստակցական և գիւղացիութեան միութիւնները կազմում են ընդհանուր՝ ան կուսակցական միութիւնների դաշնակցական հատւածները:

ԱՀԱԲԵԿՈՒՄ

144. Ահաբեկումը շինելու է երկու տեսակի, քաղաքական և կազմակերպական:

145. Ահաբեկման կարգ են դատապարտել միայն կենտր, կոմիտէներն ու բիւրօն, որոշումները պէտք է հանւեն միաձայնութեամբ:

146. Կազմակերպական ծանր զեղծարաբութեան (զէնքի կամ զրամի սեփականացման) և յանցագործութեան (գաւաճանութեան, լրտեսութեան և եղբայրապահութեան) դէպրում կարելի է մահապատժի դատապարտել միայն այն ժամանակ երբ համաձայնութիւն կատացի մի այլ մարմինց՝ բիւրօնց կամ հարեան կենտր, կոմիտէնից:

Ժանօթութիւն. Եթէ ահաբեկման դատապարտած անհամաշխ ենթարկում ահաբեկման այն կենտր, կոմիտէի կողմից, որի շրջանում է գանւեւմ, այդ կենտր, կոմիտէն պատասխանատու կմնայ ընդհ. ժողովի առջև:

ՄԱՄՈՒԼ

147. Դաշնակցական մամուլը պարտաւոր է հարազատ կերպով հետեւել կուսակցութեան ծրագրին և տարածել հրա զաղափարները.

148. Դաշնակցութեան կենտրոնական օրգան «Դրօշակ»ը և պաշտօնական օրգան օրաթերթը զեկավարում են Ընդհ. ժողովից տրւած հրահանգներով և վարում են Շիւրօնց ընտւած խմբագիրներով:

149. Ռայոնական ժողովը իրաւունք ունի հիմնելու իր ռայոնի պաշտօնական օրգանը՝ տալով նրան յատուկ հրահանգներ, իսկ կարերի դէպրում և դրամական միջոցներ, առանց գուրս զալու ընդհ. ժողովի գծած նախահաշուից:

150. Կենտր, կոմիտէներն են կարող են իրենց

շրջանում հրատարակել կուսակցական թերթ, տալով  
նրան պաշտօնական կամ կիսապաշտօնական բնոյթ,  
առկացնելով նրան իրենց եկամտի իրենց հասանե-  
քի բաժնից:

151. Կուսակցական բոլոր թերթերը պարտաւոր  
են ղեկավարւել կուսակցութեան ծրագրով և ընդհա-  
նուր ժողովի որոշումներով։ Կետրունական օշպանի  
ուղղութիւնն ու արծարած հայեացքները հիմական  
հարցերի վերաբերմամբ պարտաւորեցուցիչ են կու-  
սակցական բոլոր թերթերի համար։

### Կ. Ա. Բ Գ. Ա. Պ Հ. Կ Ա. Ն

152. Կազմակերպութեան ամեն մի անդամ կամ  
կուսակցական ունի մաքնի, կամ ժողովի իւրաքան-  
չւոր փոքրամասնութիւն պարտաւորէ ևնթարկել մե-  
ծամասնութեան կամ համապատասխան բարձր մարմ-  
նի որոշումներին, ևակառակ զեղչում նրանք հրաժար-  
ած են համարւում տեղական դործերից և ենթար-  
կութ են կուսակցական պահանջութեան։

153. Դաշնակցական մի այլ մարմին բանակցու-  
թեան մէջ է մտնում որոշումներին չենթարկելողների  
հետ միայն որոշում տեսզ մարմի թոյլաւութեամբ։

154. Ունի մարմնի անդամ՝ կարող է հեռանալ իւր  
շրջանից միայն իր ընկերների մեծամասնութեան  
բայլուութեամբ։

155. Մի մարմին չի կարող ուրիշ մարմի շրջա-  
նում որեւէ ձեռնարկ անել առանց վերջինի դիտութեան  
ու հաւանութեան։

156. Քիւրօն կարող է լուծւած համարել որեւէ

մարմին, եթէ նրա անդամների մեծամասնութիւնը  
պակասի։

### Դ. Ա. Տ Ա. Կ Ա. Ն

157. Իւրաքանչիւր Դաշնակցական մարմին կա-  
րող է իր անդամներին հնթարկել կուսակցական  
պատժի։

158. Իւրաքանչիւր որոշում պէտք է հանւի ան-  
դամների  $\frac{2}{3}$  ձախով։

159. Մանր յանցանցների գէպքում մարմինը  
հեռացնում է իր միջից յանցաւորին, այդ մասին  
յայտնելով իր բարձր մարմին։

160. Իւրաքանչիւր հուաց-ում, որ հաստատում է  
կենտր. կոմիտէից, ժամանակաւոր է մինչեւ վահերացի  
շրջանային ժողովի կամ գերագոյն դատական մարմինի  
կողմից։

161. Շրջանային ժողովը պարտաւոր է հրաւի-  
րել մեղադրողին, տալով նրան պաշտպանելու հնարա-  
ւորութիւն։

162. Շրջանային ժողովի դատավեհաը համար-  
ւում է վերջնական, եթէ այդ որոշման գէմ բողոք չի  
լինում, բողոքել կարելի է Գերագոյն Դատական  
ատեանին, որի վճիրը վերջնական է։

Ժանօթութիւն. Մեղադրուողի վերջնական հետաքրման մասին  
յայտարարւում է կուսակցութեան կենարօնական օրդնում։

163. Բիւրօն իրաւունք ունի յայտարարելու  
կենտր. կոմիտէն լուծւած, վերջինիս կողմից կազմա-  
կերպական կանոնները խալսելու դէպքում։

164. Կուսակցական շարքերից հեռացւած անդա-  
մի մասին տեղեկութիւն պէտք է հաղորդուի բիւրօն

և բոլոր մարմիններին:

165. Կուսակցական շարքերից հեռացւած անդամը չի կարող ընդունել ուրիշ մարմին մէջ, մինչեւ թիւրօի վերջնական վճիռը:

Շասօթոթիւն. Եթէ կուսակցական շարքերից հեռացւած անդամը ուզգի, կարող է յստ ընդունել միայն այն մարմին հաւանութեամբ, որ հեռացրել է նրան:

166. Դաշնակցականների և ուրիշ կուսակցութիւնների պատկանող անդամների ու խմբակցութիւնների միջն կուսակցական հոդի վրայ ծալած վեճերի դէպքում գործը յանձնուում է սիջկուսակցական դատարանի:

### ԳԵՐԱԳՈՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՏԵԱՆ

167. Բնդէ, ժողովից ընտրուում է Գելագոյն դատական ատեան, որ մնայուն է և կազմած է երեք անդամից և երեք փոխանդամից:

168. Գերագոյն դատական ատեանը ընդութեան է առնուում անհատ դաշնակցականների, կենտր. կոմիտէների, կառավարութեան դաշնակցական անդամների, դաշնակցական պաշտօնեանների, պարլամենտական դաշնակցական պատգամաւորների, բիւրօի, գրաւական, քրէական, հայտկարգագահական գործերը, յանձնուում է նրանց պետական դատարանին և կամ իր հայեցողութեամբ վճիռ է արձակուում մինչեւ դաշնակցութիւնից արտաքսելը: Գերագոյն դատական ատեանը իւր որոշումները յանձնուում է բիւրօին՝ ի գիտութիւն և ի զործ գրութիւն:

169. Դատական ատեանի անդամները կուսակցա-

կան կաղմակերպական մարմինների անդամ չեն կա- բող լինել, բայց պարլամենտական ֆրակցիայից:

170. Դատական ատեանն ունի իր սեփական կնիքը «Հ Յ Յ Թաշնակցութեան դատական ատեան» մակաղբութեամբ:

171. Ներկայ կանոնադրութիւնը կարող է փոփոխել, կրծատել կամ լրացնել միայն ընդհանուր ժողովի կողմից:

Վ Ե Բ Զ





-20-



2382